

ԴԺՈՒՍՅՈՒՆ ԵՐԱԳԻՐԸ

Այսօրվայ հեռագրերը մերկայացնում են այն դժոխային, անարարամետա-կան ծրագրերը, որ յայտնի էր մեծ մարդասպան և հրէշոճաբարձր Ար-դիւն-Համիդը իր խարխուլ գահը ամ-րացնելու համար: Նա երկնի էր հրէ-շաւոր ոճրագործութիւնը՝ ուսմանը կոտորած սարքելի Գ. Պօլսու, մեղը ձգել հայերի վրա և ապա հայերի ընդհա-նուր կոտորած կազմակերպել:

Եւ Աղանայի սոսկալի ջարդերը, հա-յերի կոտորածները, կենդանոյն ողջա-կեց լինելը այդ դժոխային ծրագրի մի մասն է: Եւ, զգալիաբար, իրականա-ցաւ:

Եւ եթէ երիտասարդ թիւրքերը չը կանխէին ու զինաթափ չանէին կա-տարած գազանին, եթէ ահարաների և ընկալիչներին միացնալ շանքերով տապալկել երիտասարդ-թիւրքերի իշ-խանութիւնը, կատարած գազանը կա-տարող էր մնալ գահի վրա և իր ծրա-գրին իրագործել ամբողջութեամբ ու այս անգամ արդէն հիմնովին ընաշխնջ անել հայուն դիրքը:

Փառք և պատիւ երիտասարդ-թիւր-քերի կուսակցութեան, որ իր կարող, արագ ընթացքով, արդարադատ վճռով մի անհեղին դժբաղդութեան առաջն առաւ, մի դժբաղդութեան, որ հաւա-սարարէս աղէտային պէտք է լինէր թէ հայ ժողովրդի և թէ ամբողջ օսմա-նեան պետութեան համար:

Թող թիւրքական յեղափոխութեան տարեգրութիւնները պատկեն մի մեծ փաստով, որ նա կարողացաւ կատա-րել արդարագոյնութեան ամենամեծ ակտը և օրէնքի տրամադրութիւնը ի զործ դնել նոյնիսկ մի սուլթանի դէմ, որ անպատեք, պղծեց իր գահը, թա-գը և գաւազանը՝ դառնալով սոսկ և հասարակ ոճրագործ:

Հ. Ա.

ԹԻՒՐԿԻԱՅԻ ՇՈՒՐԻՋԸ

Կ. Պօլսու, 17 ապրիլի
Լրագրերի մասին, զինուորական դատարանին կից կազմված քննիչ մաս-նաժողովը երևան հանեց, որ Արշիւ-Համիդը անմէջ Կա-կերպով զեկա-գարել է մարտի 31-ի յայտարարութիւնը: Մասնաժողովը երևան հանեց նաև, որ ապրիլի 11-ին պատրաստվելիս է եղել քրեական նախագահութեան ջարդ մարաքաղաքում: Բազմաթիւ խօշա-ների և Պէրայի և Կարաթիւի մեծ շինութիւնների շէնքերի վրա բաժան-ված են եղել ուսմանը: Այդ ուսմանը որոշված է եղել պայմաններ լոյս շա-րակ գիշերել և վերադրել հայերին, իսկ ցերեկով սկսել հայերի կոտորած, սոյնուհետև ջարդել և եւրոպացիներին: Այդ գաւազանութեան տեղեկութիւնը շտապեցրեց զօրքի գալուստը մայրա-քաղաք: Լրագրերը հաւատարմութեան են, իբր զնդակահարութեան թիւը 50-ից չէ անցնում. զնդակահարում են միայն մարդասպաններին:

Նոր պալատի զլրաւոր արարողա-պետի պաշտօնը ստանձնեց կրկին Գա-լիւ փաշան: (Հ. Գ.)

Կ. Պօլսու, 16 ապրիլի
Երկրորդ բանակցութիւններից յետոյ, Թէվֆիկ փաշան վերջնականապէս հրա-ժարվեց մեծ վէզիրութիւնից: Կարի-նէտ կազմելու յանձնարարութիւնը վերցրեց չիլմի փաշան: Նրա ցուցակը այսպէս է. ներքին գործերի մինիստր՝ պատգամաւորների պալատի փոխ-նա-խարհ Ճալալու, արտաքին գործերի մինիստր՝ Րիֆադ փաշա, Ֆինանսնե-րի պատգամաւոր Ջէվադ, վաճառ-քների պետական խորհրդի նախագահը, զինուորական Սալիկ փաշա (երկրորդ զորաբանակի հրամանատարը), ծովա-լիւ Քիւլա փաշա. նախկին կաբինէ-տից՝ չիլմի փաշա. արքայադատու-թեան մինիստրի պաշտօնի համար կան մի քանի պատգամաւորներ երիտա-սարդ թիւրք պատգամաւորներից: (Հ. Գ.)

Կ. Պօլսու, 17 ապրիլի
Սուլթանը, ծովով գալով հին ա-պարանքը, ժամը 11 և 45 րոպէին բաց կաթով զնաց Այա-Սօֆիա մզկի-թը: Կաթը մէջ սուլթանի ճանդեպ առաջին տեղը պրսւել էր Գալի-Մուխ-թար փաշան: Սուլթանի ետեւից կառ-բերով գալիս էին նրա երեք որդիի կանթնիներով և քարտուղարներով: Առթիւնց յետոյ սուլթանը վերա-դարձաւ նոյն ճանապարհով Գոլմա-րալէի պալատը հին սպարանքի մի-ջով: Ապարանքի բակում շարքերով կանգնած էին բոլոր տեսակի մակե-դոնական զօրքերը պատերազմական հագուստով: Ներկայ էր անագին ժո-ղովուրդ: Հանգիսի մուտքը ազատ էր: Գինեբայալտը բաւականաչափ սակա-ւաթիւ է, քան նախկին սէլաուլըների ժամանակ: Գիւլամատներից եկել էին քչերը, և բոլորն էլ ոչ պաշտօնապէս:

Սուլթանին ցնձագին ընդունելութիւն արին: (Հ. Գ.)

Կ. Պօլսու, 17 ապրիլի
Ապրիլի 13-ին բոլոր կամաւորները ժողովեցին քաղաքի հարաւային կող-մը՝ Դուռ-Փաշայի զօրանոցում: Այսօր կէսօրին ի պատիւ նրանց պետութե-նը կազմում է խնձոյք, որից յետոյ նրանք կարճակիւն իրանց տները:

Գինեբայալտը ժուրնալիստների հետ խօսակցելու ժամանակ խնդրեց հերքել այն անհեթեթ լուրերը չոր-բոր զօրաբանակի մասին, որը, նրա ասելով, հաւատարմի է սահմանա-դրութեան:

«Կուրիէ դ'Օրիանը» մի առաջնոր-դող յօդուածով խորհուրդ է տալիս ան-միջապէս փոխել սահմանադրութիւնը աւելի լիբերալ ուղղութեամբ:

Ձերբակալվածներ թիւը աճում է: Ձինուորական դատարանին են յանձն-ված բոլոր այսպէս կոչված «Պրինի-պօ կողմ հիւրերը» և այնտեղ պաշ-վող հին ըէֆէրի մինիստրները:

Ամեն կողմից երիտասարդ-թիւրքե-րին խորհուրդ են տալիս չափաւոր լի-նէր, ապկայի, նշաններին նայած, վճռված է մի հարուածով ազատվել նոր կազմի բոլոր թշնամիներից: (Հ. Գ.)

Վան քաղաքի հայոց գաւառական ազգա-յին վարչութիւնը և առաջնորդական տե-ղապահ Ջաւան վարդապետ Տէր-Եղիայանը դիմել են Թիֆլիսի ճանդանակիչ Մասնաժո-ղովին և իրանց ուրախութիւնը յայտ-նելով, որ Մասնաժողովի որոշել է մի քանի ձեռնհաս անձինք ուղարկել Հայաստանի նահանգները ուսումնասիրելու, կցում են:

«Ուրախութեամբ իմացած ենք, որ պատ. Մասնաժողովը որոշած է մի քանի ձեռնհաս անձինք զբիւր թիւրքաճայապատանի նահանգ-ները, ուսումնասիրելու տիրող կարտու-թեան աստիճանը, պատճառները և զանոնք հիմնական կերպով դարձանելու միջոցները: Այդպիսի որոշումը միանգամայն շնորհա-կալութեան արժանի է:

«Մեր կարծիքով, քանի մը տարիներէ վեր թիւրքաճայապատանի մէջ տիրող կարտ-ուութիւնը որչափ որ արդիւնէր է տիրող Դուռային ըէֆէրին, նոյնչափ ալ բուցէ ա-նոր երկրագործական ու անտեսական յետ-նետ գրութեան և կարտուութեան հիմա-կան դարձան մը ըլլալու համար անհրա-ժեշտ ու կարեւոր է քարոզել և բարձրաց-նել անոր երկրագործական գրութիւնը՝ երկրագործական դերակոչող միջոցներու և նորոգելու տեսակի գրութիւններու և մեքե-նաներու ներմուծմամբ:

«Գաւառ. ազգ. վարչութիւն, նկատու-ղութեան տանիքով այս պարագաները, որո-շեց ձեռն ուղարկութիւնը հրաւիրել անոնց վրայ և առաջարկել, որ եթէ կարելի է եր-կէրը ուսումնասիրելու համար որեւոր ան-ձինք լինին միեւնոյն ժամանակ երկրագործ. և գիւղատնտես. մասնագէտներ, որպէսզի կարող ըլլան ուսումնասիրել նաև երկրի տնե-սական զարգացման, մշակութեան միջոց-ներու աղանցման ու ընչ և դիւրին աշ-խատութեամբ շատ արդիւնք ձեռք բերելու միջոցները, որով միայն կարելի է դարձա-նել աղքատութիւնը, բառնալ թշուառու-թեան բնական պատճառները և միջոց ըն-ձայել հայաստանի երկրագործ ժողովու-րդին յառաջդիմել անտեսապէս և կարող չլի-նել այլ ևս մարդասիրական օգնութիւն-ներու»:

Կ. Պօլսու, հաղորդում են, որ Արշիւ-Համիդը գահնկեցութեան ֆէթվաւ լսե-լուց յետոյ, ասել է. «Այդ իմ բազմի է (դամաթ), և ես պարտաւոր եմ հնազանդվել ժողովրդական կամեցման»:

Գահնկեց արված Արշիւ-Համիդի անձ-նական կարողութիւնը թողնվում է իրան: Բացի դրանից նրան նշանակված է ամսական 50,000 ֆրանկ կենսաթոշակ:

Հաստատված է, որ լիբերալների պա-րագրով իշխողի ֆեմալը Եւրոպից ստա-ցել է կէս միլիոն թիւրքական ֆունտ լրեա-կերտասարդ-թիւրքերին զէմ արանայինե-րին ապստամբեցնելու նպատակով, բայց վախճելով դրանից մի անշան մասը՝ միա-ցեալը իւրացրել է: (ԵԵ.Յ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կօրֆու, 17 ապրիլի
Վիլնիւս կայսրը Մուհամմէդ V-ին ուղարկեց շնորհաւորական հեռագիր:

Բեռլին, 17 ապրիլի
Թիւրքաց զեպանը արտաքին գոր-ծերի մինիստրութեանը տեղեկացրեց նոր սուլթանի գահ բարձրաւորում մա-սին: Գերմանական կառավարութիւնը այդ տեղեկութիւնը նկատի առաւ և խնդրեց թիւրքաց զեպանին թիւրքաց կառավարութեանը միջոցով շնորհաւո-րել սուլթանին և օսմանեան ժողովրդին: Միևնոյն ժամանակ Կ. Պօլսու գերմա-նական զեպանին յանձնարարելեց թիւրքաց կառավարութեանը հաղորդել Գերմանիայի շնորհաւորանքը: Մասաւ սեկրետար Ֆօն-Շէնը նոր սուլթանի

գահակալութեան առիթով այցելեց Թիւրքաց զեպանին:

Պետական կանցլէրը շնորհաւորական հեռագիր ուղարկեց Ֆէրդինանդ թա-գաւորին, որը հեռագրով շնորհակա-լութիւն յայտնեց Բօլշարայի նոր զարագլուրը սիրալիք ուղեւնելու մա-սին: (Հ. Գ.)

Լօնդոն, 17 ապրիլի
Լօրդ Ջօրջի ճառից յետոյ, որ տե-ւեց չորս և կէս ժամ, համայնքների պալատը 281 ձայնով ընդգէմ 120-ի ընդունեց մի բանաձև, որով հաւանու-թիւն է տրվում սպիրտային խմիչքնե-րի, ծխախոտի և աւաթօրթիւնների հա-մար զօրծածվող դիւրաբաւա նիւթի տուրքերը ժամանակակից բարձ-րացնելուն:

Վիեննա, 17 ապրիլի
«Կօր. Բիւրօյին» հաղորդում են Սա-լօնիկից. «Կալօնայում երեք օֆիցէրներ ընտելութիւն կատարեցին զինային մա-գաղիներում գղութնութեան նպատա-կով և յայտնագործեցին զէնքի պակա-սուծում: Երբ օֆիցէրները գլուս էին զալիս մագաղիներին, մի ալքանացի ոչ-զինուոր պահակ սկսեց կրակել օֆի-ցէրներին վրա: Մայրը և կապիտանը սպանված են: Երրորդ օֆիցէրը կարո-ղացաւ ազատվել: Բոլոր միջոցները ձեռք են առնված ձերբակալելու Իս-մայիլ-Բեմային, որի ազդեցութիւնը Վալօնայում շատ նշանաւոր է: (Հ. Գ.)

Կուրանի շրջանի հայերը հաղորդել են Պետական Դուռայի անշում Պօլսովում, որ իրանց շրջանում մասալական խաղա-կութիւններ են տեղի ունենում և կաւանա-ւորում են հարուստ ու ծիւր մարդկանց:

Կալանաւորներից մի քանիսը հոգեկան հիւանդութեան են տապել: Սօցիալիստները, այդ տեղեկութիւնների համաձայն, Պետա-կան Դուռային ներկայացնում են հարցա-պնդում: (ԵԵ.Յ.)

Պետական Դուռայի կենտրոնի անգամների միջև հարց է ծագել Դուռայի ընտրողական օրէնքների մէջ փոփոխութիւն մտցնելու այս մտքով, որպէսզի բարձրացվի ընտրո-ղական ցնեղը և պակեցվի քահանայների ու գիւղացիների պատգամաւորների թիւը: (ԵԵ.Յ.)

Բագու, 17 ապրիլի
Իսլախանիւմ չորս զինված մարդիկ կո-ղտալով են նախաձեռնել երկու կոտա-վարիներ, մէկը յափշտակելով 1600 ռուբլի, երկրորդը՝ 3500 ռուբլի: Հետա-մդիւրում ժամանակ կողպալիներէց մինը վերաբերվել է: Կապաւածով ձերբակալված են մի քանի հոգի:

Վաճառական Դեմաթի բնակարանի դռնե-րի մօտ անյայտ չարագործները դրել էին պատրուդով ընդկող մի ուսմը: Պատրուդը ըստ երևոյթի հանգաւ, պայթում տեղի հունեցաւ: Դեմաթն սրացել էր մի քանի նամակներ փոքի պահանջով: (ՀՀ. Գ.Յ.)

Արժանանաւոր աղբիւրներից «Ры-ЗНАМЯ» լրագիրը տեղեկացրել է, որ կոմս Վօրոնցով-Դաշիովը մնում է փոխարքայու-թեան պաշտօնում:

Դուռայի շրջաններում յամաւ կերպով պատող լուրերի համաձայն, կոմս Ուլա-նովը Պօլսուից վերջին միջամտութիւն է հրաւի-րել՝ Դուռայի ապրիլի 13-ի նշանում սին-դի նախահաշիւը քննելու ժամանակ իրան վերաւորանք ուղղելու համար: (ԵԵ.Յ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԸ ԵՒ ՆՐԱ ՍԻՆԸ

Նախորդ յօդուածով ևս շօշափեցի մեր զարդակական հարցը և այն ֆակտորները, որոնցով զարդը կարող է ազդվել, առա-ջագրելով և հաստատ հիմքի վրա կանգնելով ապրիլ, յարաւանքի առանց այդ ֆակտոր-ների, և ասացի, զարդը՝ զարդը չէ: Բայց չը յիշեցի մի այլ խոշոր և էական ֆակտոր, առանց որի զարդը անկարող է շնչաւորվել և, իբրև բարդ մեքենայ, առանց դուրսու, շարժող ոյժի՝ գործել, ար-գիւնարելու:

Առանց այդ ֆակտորի, որի մասին լինե-լու է խօսքս, մնացած բոլոր կարեւոր, ան-հրաժեշտ ֆակտորներով, զարդը մեռած, անշունչ դիակ է:

Դա ուսուցիչն է:

Դա այն նաւաստին է, որ նաւի զեկին ուղղութիւն է տալիս, դա այն ըրշափն է, որ ամբողջ նաւի շարժման և կանծաւոր գործունէութեան ոգի ու շունչ է տալիս:

Դա՝ մեքենայապետ-տեխնիկն է, որը շարժողութեան է բերում և արդիւնաբերե-լու ընդգործութեան և զարձնում մեքենայ՝ զոր-մարանը. մի խօսքով դա այն մարմնի զուլուն է, առանց որի ամբողջ մարմինը մեռած է:

Դա ուսուցիչն է, դա այն խոշոր ֆակ-տորն է, դա այն մարմնի զուլուն է, որը կոչվում է զարդը:

Այստեղից պարզ է, որ հիւանդ, անկարող, անշունչական զուլուն է հիւանդ մար-մին կուսնայ, և հիւանդ բուժանդակու-թիւն հողի:

Առողջ զուլուն կուսնայ և առողջ մար-մին:

Եւ այդպէս, եթէ այսօր մեր զարդը հիւանդ է, նրա ամենազրաւոր հիւանդու-թեան սիմպտոմ ուսուցիչն է:

Եթէ մենք այսօր չունենք զարդեր ի-րանց իսկական նպատակին պատասխանող, դա կը նշանակէ չունենք իսկական ուսու-ցիչներ, զուլուններ:

Ինչն է պատճառը:

Անշունչ ընթերցողը պիտի սպասի այժմ ինձանից հայտնաբեր, մեղադրանքի մի տարափ հայ ուսուցչի գլխին:

Ոչ, ընթերցողը թող այդ չը սպասի ին-ձանից, եւ հայտնելու և մեղադրելու ոչ ցանկանալու ունենի և ոչ էր այդ մէջ զըա-նում եմ մի որեւէ դարձան, մի որեւէ միջոց ցաւը բուժելու, բացաւածը փակելու:

Թող ընթերցողը ունենայ համբերութիւն ինձ հետ միասին և տասն ակնոցներով, նոյնիսկ խոշորացոյցով զննված մօտենալու հարցին և անալիզի երթարկելու:

Ինչու մենք ուսուցչի չունենք: Ինչու մեր զարդի զուլուն հիւանդ է, հիւանդ է և մարմնի՞ զարդը:

Վերջին հարցին ես պատասխան տուել եմ «Դարաց չունենք» յօդուածումս. այժմ դառնեց այն «զլիւն», որի գլխին այն-քան ընկալներ են ջարդված նրա ձեռքով, որի ձեռքով եղել է մի չաքիւ, նոյնիսկ մի քարի կտոր:

Ուսուցիչը յանցաւոր չէ, եթէ նա ուսու-ցիչ չէ, եթէ նա զուլուն հիւանդ է:

Գիտէք երբ ուսուցիչը կարող է ուսուցիչ լինիլ:

Երբ նա կոչվում է գնում իր ասպարէզը, այս մէկ. երբ նա մտնելով այդ ասպարէզը՝ հնար, միջոց ունի շարունակել ուսուցիչ լինելու:

Առաջին կէտի վերաբերմամբ ես պիտի ասեմ, որ մեր հայ ուսուցիչները միշտ և ուրուար մեծամասնութեամբ գնում են այդ ասպարէզը վատ սիրով բուցել, շատերը չունեն և կոչում, տաղանդ այդ ասպարէզի համար, բայց գնում են սրտերում ջնքմ կրակով, և երանի թէ այդ սէրը, այդ կրա-կը մնալ մինչև վերջը, զոնէր նիւթ աւելի վառվելու, բացաւածիւրը այն հուրը, առանց որի անհնար է մանուկ սրտերում վառել գիտութեան, ճշմարտութեան սէրը:

Առաջարկեց տեղեց վերաբոյցը միշտ իր սրտերում պարտել և համարել մեղադրել և պատճառ բռնել ուսուցչին:

Դարաց ընկած գրութեան մէջ է՝ մեղա-ւորը ուսուցիչն է, զարդը արդիւնք չէ ուսուցչի մեղաւորը ուսուցչին է:

Բայց նեղութիւն կիլի են պղծօք նը-րանք, որոնք աղչափ եղանդուն կերպով մեղաւորում են ուսուցչին, նայել նրա վրա առաջաւորութեան դէմ: Դեմ է զըա-նել նոյնիսկ զարդի պահողը, նիւթապէս սը-նուցողը:

Ո՞վ է հայ զարդերը համար ժողովարա-րութիւնը, որով, ո՞վ է հայ զարդի համար ներկայացում, երկոյթ սարքողը. ուսուցիչ-ը: Ո՞վ է հայ զարդի անուան և առաջա-դիմութեան համար քաղցած և պատասո-ւած կոչիչներով իր կենսը բարձր տուողը, ուսուցիչը:

Եւ միթէ այսօր, երբ նոյն ուսուցիչը միակ ուժեղ սրտացի է մեր զարդի առաջադիմութեան և յարաւորութեան դու-րին, իրաւունք ունենք նրա գլխին ընկոյգ-ներ ջարդելու:

Ոչ:

Նուիրական է մեզ համար հայ ուսուցչի անշունչ և վնէ է նրա կոչումը, և արու-թեամբ է մօտեցել նա միշտ հայ զարդին: Եւ այսօր եթէ մենք ունենք մամուլ, զարգանքութիւն, ունենք գաւառական թաղ-թոս, պարտական ենք այն «սե մշակել», որը իր ուսերի վրա է տարել տարիներ շարունակ մեր կուլտուրական կենսի «սե աշխատանքը»:

Եւ չը կայ այսօր մի անկեւն մեր կու-տուրական կենսի շինութեան մէջ, ուր չը լինի հայ վարժապետի ձեռքը. չը կայ մի քար այդ շինութեան մէջ, որը յղված, տաշված չը լինի այդ վարժապետի ձեռքով:

Մե սիրում եմ, պաշտում եմ այդ տիպի և ախորժեկով լիքս ձգում նրա պաշտպանի տօգան:

Հիմա դառնեց այն հարցին, թէ ինչու նա «հիւանդ զուլուն» ունի:

Կարծում են, որ ուսուցիչը ծոցը դնելով զարդակական վկայականը և մտնելով զըա-րդի պատմի մէջ եղաւ ուսուցիչ:

Դա շատ քիչ է:

Ուսուցիչը պատրաստվում է, մշակվում է նոյն զարդից պատմի այն նպատաւ-ւոր պայմաններին մէջ, որոնց մէջ պէտք է նա աշխատէ, գործէ, առաջադիմէ:

Ազգապետականները մէջ տարածված լուրերի համաձայն, առաջին հերթում հրաժարեցվելու են գնահատելի Տօմսկի շրջանի Բոլոյսկի և Բոլոյսկի-Կորսակով և այլը։ Նոր պաշտօնականներ նշանակելու դերադատութիւն պիտի տրվի այնպիսիներին, որոնք մեծ կապեր ունեն, որպէս զի հարկաւոր դէպքում հեշտութեամբ կարելի լինի հեռացնել պաշտօնից։

ՅՕԳՈՒՏ ԱՅՑԱՍԱՆԻ ՍՈՎԵՏԱՆԵՐԻ

Ստացանք Վերինէլովսկից, պ. Յ. Մէյ-րամովիանից 13 ր. 40 կ. որ հանգա-նակելու է այդ քաղաքում պ. Ն. Լաշինսկի և պ. Մ. Երեյեանի տներում եղած ճաշ-կերութի ժամանակ։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱ
(Հետադրով)

Պետերբուրգ, 17 ապրիլի 96-րդ հիստոր. բայ է ժամը 11 և 10 րոպէին Նախագահում է իշխ. Ազգային Միությունը օրինակում են ժողովրդա-կան լուսաւորութեան միջնորդը և նրա օգ-նական Գեորգիևսկին։

Հերթին գրված է ժողովրդական լուսաւոր-ւթեան միջնորդական ծախքերի նախաձեռն-ը։

Գրվել են 40 հետադրեր։

Ընդունվում է ցուցակագրելը դադարեց-նել։

Կապուտինը գեկուցանում է, որ ծախքերը հաշված են 64 միլիոն ռուբլի, որը կազմում է ամբողջ պետական ծախքերի 21/2-ը։ «Գումարը,—ասում է գեկուցանողը,—այն-քան էլ մեծ է, բայց տարեց-տարեի աճում է. այդ պատճառով, հարց է ծագում ինչ պարբերական են ցուց տալու ժողո-վրդական ներկայացուցիչները դէպի այդ պետակ աճումը։ Մենք սովորաբար աշխա-տում ենք բոլոր նախաձեռնումներում բաւա-կան կրճատումներ անել մեր ընկերի դրու-թեան պատճառով։ Սակայն այստեղ մենք, ընդհանրապէս, կը ցանկանայինք, որ ծախ-քերը աճեն, որպէսզի ծախքի ուսաց ժո-ղովրդական կրթութեան մեծ գործը։ 1909 թ. ծախքերը անցանց աւարկւն հետ համե-մատած 11 միլիոնով աւելի են։ Նրանցից գլխավորները մօտ 7 միլիոն ռուբլի նշա-նակվում են ժողովրդական ստորին կրթու-թեան զարգացման համար։»

Այնուհետև գեկուցանողը մատնանում է, որ Դուստի անցանց տարի արտայայտած անհանգիստը ցանկութիւնները ժողովը-րդական լուսաւորութեան միջնորդութիւնը վստահ կատարել է, մի քանիսի վերաբերու-թեանը ներկայացրել է համապատասխան օրինադրել, մի քանիսն էլ յանձնված են միջնորդների խորհրդի քննութեան։

Կապուտինը հարկաւոր է համարում կանգ առնել կրկին միջնորդութեան մի քանի յա-տուկ միջոցների վրա։ Կրթական հաստա-տութիւնների ուսման վճարը և դաստի-սութիւններից 1909 թ.ի նախահաշուով ար-դիւնք կը ստացվի մօտ 10 միլիոն ռուբլի։ Այդ արդիւնքի շաբիր բարձր կրթական հաս-տատութիւններում որոշվում է նրանց կա-նոնադրութեամբ, իսկ միջնակարգ և ստո-րին կրթական հաստատութիւններում որոշ-վում է տարբեր եղանակով։ Տօմսկի դի-նադիայում տարեկան ուսման վճարը 40 ռուբլի է, Մոսկվայում—100 ռուբլի։ «Մենք կաշի է,—ասում է գեկուցանողը,—որպէսզի վճարի լայնացումը այդպէս հեռուն չը գնայ»։

Ապա գեկուցանողը իր խնդրանքներն է յայտնում այն առիթով, որ դասնական անակաւոր ժամանակներ են նուիրում ժողո-վրդական կրթութեան կարիքների համար։ Այդ տեսակ դրամադուրներին քանակը այժմ կազմում է 44 միլիոն։

Յուսկ յետոյ հետադրը ծանրանում է մեր ժողովրդական կրթութեան գործի դուր-սեան վրա և նրան դառնում է պակասաւոր անակաւոր, աւելանում է դպրոցների թիւը, աճում է սովորողների քանակութիւնը, բայց գործի որակային կողմը դեռ շատ բան ու-նի ցանկանալու։ Դպրոցների երեւոյթ են, կրթութեան սխառնը գտնվում է կապի-սեան վրան մէջ, դպրոցների բարոյական հեղինակութեանը հարկաւոր բարձրութեան վրա չէ կանգնած։ Ինչ վերաբերում է բարձ-րագույն կրթական հաստատութիւններին, մենք այս տարի—հետագայ կարծիքով—անցրինք վերին աստիճանի ուսումնական և րկույթ, ականատես եղանք բարձր, դպրոցի հանրապետական ֆաղաբակի կանանց ան-ցաւ երբեք նախկին խոսկարար տարիներ-ում չէ եղել այնպիսի ձգտում դէպի պա-րապետները, ինչպէս նկատվում է այժմ։

Իր կողմից պետութիւնը պէտք է լրակա-տար վստասութիւն ցուց տայ ուսուցչական մարմին։ Ժամանակն է վստասելու ուս-նական լիզէնզիային (ձայնի արձակողից «վաղ է, շուտ է»)։ «Եթէ,—վերջանալով—հետադրը—պետութիւնը կը յենվի չը կըրթ-ված մարդկանց վրա, եթէ բարձր ինտելի-գենցիան նոյնպէս կը մեկտանապ պետա-կան գործից, նրան կը վերաբերվի կապի-սեան գործի, օպորտիւն կը կազմէ ինչպէս էլ որ լինի, գործը առաջ չը գնայ։ Ժամանակն է խօսել խաղաղասիրական մտքով, ժամա-նակն է հասարակական և պետական բոլոր մանրամասնութիւններում կրթիկ ձգտում դէպի բարին և հաշտութիւն։ Ժամանակն է լսել բարու և խաղաղութեան խօսքեր միու-թիւն ձեռք բերելու և մեր պետական պար-

տականութիւնը յառնու մեր բազմամիլիոն ժողովրդի շահերի կատարելու համար, ժո-ղովրդի, որի ապագային մենք չենք կարող անտարբեր վերաբերվել»։ (Մատնաւորութիւն կենտրոնում)։ (Հ. Գ.)

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԵՐ, ԼՈՒԻՍԻՐ

Ներքին գործերի մինիստրի օգնա-կան Կուրյովը Պետական Դուստի հայազգի պատգամաւոր Ալեքսանին յայտնել է, որ Արմաւիրի աղմկնիստացեալին կարգա-դրված է ընդդիմանալը դադարեցնել։ Գործի քննութեան համար Արմաւիր է ու-ղարկվում գնդապետ Իսախանովը։

Պետերբուրգից «Յա» թերթի խմբա-գրութեան անունով ստացվել է այս հետա-գիրը. «Ձերանամների միջնորդութեան նոր ձանապարհները մասնաժողովը Թիֆլիսի հանապարհ աշխատանքները թողց կա-խտախախտ երկաթուղային կառուցման մե-նաշնորհը 41/2-ային կառավարական երաշ-խաւորութեամբ Լիպոլովներ իշխ. Ձեյո-կանով և իշխ. Անդրոնիկովը։

Կովկասեան շերամապահական կայա-րանին կից մտադրութիւն կայ բանալ մի դպրոց մեղուաբուծութեան աշխատաւոր-ներ պատրաստելու համար։

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը տեղեկութիւն է տալից Պետերբուրգից, որ այս տարվայ մայիսին կայանալիք քաղաք-ների բարեկեցութեան համառոտական ցու-ցահանդէսը յարգելի պատճառներով յետա-ձգվում է։

Այս տարվայ աշնանը, երբ կը սկսվեն պիւրատեսակների համադրմանի նիստերը, Թիֆլիսում կը բացվի նաև թունապահու-թեան, մեղուաբուծութեան և մրգաբուծու-թեան ցուցահանդէս։

Ձիւնորական գլխաւոր դատարանը յարգել է Նովոքոստիկի հանրապետութեան մեծագործը գործի պաշտպանների միջ-նորդութիւնը և բեկել է զինուորական-հա-նադական դատարանի վիճուր և գործ վե-րադարձրել է ի նոր քննութիւնը դատա-րանի ուրիշ կազմով։

Ժողովրդական համալսարանի ընդ-րութեան վարչութեան միակ հոգսը այժմ միջոցներ գտնին է Միլիցիների բայցակա-ցութեան պատճառով նրա լուսաւորակ. հաս-տատութիւններին փրկելու վտանգն է սպանում։ Վարչութեան վերջին նիստում որոշված է մայիսին կազմել մի շքեղ դրօսանք։

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քննելով անմիջ ընկերութեան միջնորդութե-նը՝ որ երկրորդի թէ Նախադիկաւում նոր դիմ անցկացնելու և թէ աւանան ձիւնաբարձը երկրաբարձը վերածելը հնարաւոր չէ գտել համաձայնելը դրան, ո-րոշելով յիշեալ ձեռնարկութիւնների չը կատարելու դէպքում, ընկերութեան հետ կարգիլ պայմանագրի համաձայն, այսինքն ընկերութեան ամբողջ ձեռնարկութիւնը դրակի քաղաքի օգտին։

Ստացանք Բոստօնից մի նոր հայե-րէն պիւր «Վերթական սկզբունքներ և իշխա-րներ» վերնագրով, հեղինակութիւն Մ. Մի-նասանի։ Գիրքը չօգտվում է դատարարա-կութեան և լարեկարգութեան վերաբերեալ հարցերի։ Գինն է 20 դրուր։

Նախանգական միութեաններ և դաշ-նակցութիւնների աստիճան օրինականացրել է Թիֆլիսում կազմված «Ռուսական մայ-երկարկան ընկերութեան» կանոնադրու-թիւնը։

Նոյն աստիճան վաւերացրել է «Պա-տերազմում ընկած զինուորականներ—ու-սանց ազգի խորութեան—որերի ինամա-տար ընկերութիւնը», որ հաստատվել է Թիֆլիսում։

Մարտական կամուրջի հիմքը ար-դէն պատրաստ է։

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը պայմանագրի ոյժով անօնիմ ընկերութիւնից պահանջել է անմիջապէս դրամի վերածել 280,000 ռուբլի ընդամենը Մուկրանեան կամուրջի կառուցման համար։

Իշխ. Գաղէշէլիանիսի դիմել է Թիֆ-լիսի նախագահութեան խնդրելով թողու-տրել հրատարակել Թիֆլիսում վրացերէն մի հասարակական-գրական և քաղաքական օրաթերթ «Ջանգի» (Քնար) անունով։

Այսօր Թիֆլիսում, ցերեկային ժամը 4-ին, տեղի կունենան 3-րդ ձիարշանները։

Բաժնուժին, ապրիլի 17-ից, հե-տադրում է «Կառնա»-ին հետեւալը. «Երկրորդ» լրագրի ապրիլի 13-ի համա-րում տպված է, իր Գովկասի Փոխարքայի կարգաւորութեամբ ևս ձեռնարկված եմ բազուցի միլիոնատէր Սուսանայիկովի յափշտակելու և նրան ազատելու համար 26,000 ռուբլի ստանալու մէջ մեղադրվելու պատճառով։

Բարիհանգեցէ տպել իմ յայտարարու-թիւնը, որ այդ տեղեկութիւնը գաղութի մի սուտ է։ Բազուի սրիկաների ձեռքով յա-փաշտակված Նաղիկով որոնվեց և ազատ-վեց առանց փրկաւրի Բազուի ոստիկանու-թեան պաշտօնականների և Բազուի պատա-ւոր մահմեդականների միջամտութեան։ Զանք-րով, որոնք գործում էին միասին իմ իրեր այդ ժամանակները Բազուի քաղաքապետի պարտականութիւնները կատարողի զեկա-վարութեամբ։

Նաղիկովի յափշտակութեան և նրա խու-

ղարկութեան հանգամանքները հակիրճ յայտ-նի են կովկասեան գլխաւոր ըշխանութեան հարեւաւոր վանքերի, որոնք Բազուի լա-ւագույն մարդկանցից են, և իրան Նա-ղիկին։

«Ես միջնորդել եմ իմ իշխանութեանը՝ ըըն-նութեան սկսել իմ վրա բարդված զբաղաւոր-թիւնների առիթով, որի վարձանից յետոյ «Երկրորդ» լրագրի խմբագրի դէմ ես դատ-եմ բանալու։

«Կովկասեան և ուսական լրագիրներին խնդրում եմ արտասպէս այս հեռագիրը։

«Բազուի քաղաքապետի նախկին օգնական, Բաժնուժի շրջանի զինուորական նախա-դպետի օգնականը գնդապետ Զուրաբովը»։

ԳԻՏՈՒԹ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐ

«ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ»

Կրօնափրկիստիկայական ընկերութեան վեր-ջին նիստի մէջ, ինչպէս գրված էր «Բեկե»-ում, Ն. Ա. Բերեանովը կարդացել է մի հետաքրքրական զեկուցում կապանի հո-գեւոր ձեռնարանի պրօֆեսոր Նեմէշովի «Գիտութիւնը մարդու մասին» («Наука о человеке») նշանաւոր շարադրութեան առի-թով։ Այդ զեկուցման հետ կուղիք քաղու-ծօրէն ծանօթացնել «Մշակի» ընթերցող-ներին։

«Միշտ և ամեն ժամանակ մարդկային բանականութիւնը բնութագրել է հաւատի դէմ և նրանց միջև եղել է պայքար։ Ժա-նանակից մեր կուտուրական աշխարհը հարստացած է բանականութեան և զիտու-թեան մեծամեծ արտադրութիւններով, բայց այդ աշխարհի ունի իր առաջ և հա-ւատի բարձրագոյն համարութիւնը (սին-թէզ) ի դէմս Բիւստոսի կրօնի։

«Պաշտօնական եկեղեցու աւանդական ա-ստուածաբանութիւնը անգործ է պայքարելու բանականութեան հետ և արդարացիելու ջրխտնէութիւնը։ Այդ աստուածաբանու-թեանը շատ իմացական, պաշտ է Փիլիսո-փայական ճանապարհով ի կարելի հաւա-տի գալ։ Այդ ճանապարհով երեք չէ կա-րելի խորամտնել լինել մարդկային սրտի դադանքին, իսկ այս գաղտնիքը՝ Բիւս-տոսի ինքնօրոգը։

«Եւ ինչպէս այդ է, որ չեն կամենում հա-սանալ եկեղեցու պաշտօնական ներկայա-ցուցիչները։ Բայց Ռուսաստանում եղել են և կան «հոգեւոր ծարաւով տապալկված» աշ-խարհական մարդիկ, որոնք ձգտել ու ձըգ-տել են պարզելու Բիւստոսի խորութիւնը, հաւատի գաղտնիքը։ Այսպիսի մարդկանցից են Վ. Սոյոլիկովը, Իշխան Սերգէյ Տրուբե-կօյ և ուրիշներ։ Այս աշքի ընկնող մտա-ծողների և խորին կրօնապաշտների թիւին է պատկանում կապանի հոգեւոր ձեռնարանի պրօֆ. Նեմէշովը, որ խորապէս հաւատա-կան է Բիւստոսին և որ իր փիլիսոփայա-կան դէմքը ուղղում է դէպի հաւատի պաշ-տանքները։ Նա մի առ մի տարբերու-ծում է կրօնի խնդիրը և մասնաւորապէս բերիտունէութեան հիմնական դրութիւնն-երը։ Այսպէս՝ նա հետադրում է փրկագոր-ծութեան գաղափարը և պայի է բարձր համակրելի հետեւանքների։ «Փրկութեան» գաղափարը—ասում է նա,—յայտնի է ե-ղել և հեղինակն աշխարհին, բայց այնտեղ ունեցել է մարդկութեան և աստուծու-թեան միջև իրաւաբանական համաձայնու-թիւն կայացնելու քննող զուտ երկարա-բեւեալութեան ըմբռնողութեամբ։ Եթե անու-սութիւնից շատ հեռու չեն գնացել և եկե-ղեցու աւանդական աստուածաբանները նրանց վարդապետութեան փրկութիւնը՝ «երկրաւոր բարեքի երկնաւոր նկարն է»։ «Փրկութեան» իսկական՝ քրիստոնէական հասկացողութիւնը անհնաւային բարձր է, —այն՝ «փրկագործութեան» գաղափարն է։ Մարդն է կարող հաշտվել մեղաց «թողու-թեան» հետ։ Մարդն պէտք է «օղջացնել» մեղքը, փոխի իր բնութիւնը, հասնի կա-տարելութեան։ Հեթանոսական հասկացո-ղութիւնը, երբ ասում է, որ աստուծոյ կարելի է հաճանալ կոտորածներ ևս, «մեղքով կարելի է բարեկեցնել Աստուծուն»։ Այնինչ Ա-ստուած կարող չէ իրան հաճոյանալու և ոչ էլ կարող է վերաւորվել մարդուց։ Ա-ստուած կամենում է միայն մարդու կատա-րելութիւնը և օգնում է մարդուն ընթա-նալով կատարելագործվելու ճանապարհով։

«Ինչի մէջ էր կայանում մարդու «ա-նկուրդ» նշանում, որ մարդն ուղում էր կատարելութեան հասնելու համար փոխա-րեւել իր ներքին աշխատանքը բնութեան արտաքին, ֆիզիքական գործութեամբ։ Բիւ-րական աւանդութիւնը արգելված պտուղը ճաշակելու մասին ունի խորը բնագիտա-կան իմաստ։ Մարդը հրապարակել արտա-քին բնութեան յեղակարծ կախարդական ոյժից, երեւութական հորութիւնից և ե-րկարկեց նրա իշխանութեանը։ Մարդիկ ենթարկեցին իրանց կեանքը բնութեան մեղքնայական ոյժերին։ Եւ մարդկութեան փրկագործութեան համար Բիւստոսի անձ-նաւորութիւնը դարձաւ անհրաժեշտ։

«Բիւստոսի յայտնութիւնը ստեղծագոր-ծութեան շարունակութիւնն է։ Բիւստոսի արդարութիւնը մարդկային բնութեան արդա-րութիւնն է։ Բիւստոսի անձնաւորութիւնը,—ըստ Նեմէշովի,—ինչ է մարդը հանկու-կէ պատասխանն է։ Բիւստոսն է մարմնա-ցոյցի սրբող առ Աստուծոյ, առ արդարա-կատարելութեան։ Եւ փրկագործութեան բո-

ւոր գաղափարը կայանում է այդ սրբող մէջ։ Ոչ թէ երկիւղ դատաւարանի ու դժոխային տանջանքների առաջ, այլ ամեն երկիւղ և անձնական շահ չաղթող մարդու սէր։ Այս տեսակէտից «փրկութիւնը» հնարաւոր է և՛ հեթանոսների, և՛ միջին իսկ ընկած ու-գիներին համար։ Ոչ քիչ է արգելված այս «փրկագործութեան» հնարաւորութիւնը։ Հարկաւոր է միայն ունենալ ծարաւ Բիւստո-սի, ծարաւ յուրանական կեանքի, ծարաւ յատարելագործութեան։ Եւ եկեղեցին է տիե-րիական հոգին միացած Բիւստոս-բանի հետ»։

Նեմէշովը,—այսպէս Բերեանովի խօսքե-րին,—անխնայ քննադատն է մեքենայական հասկացողութեան ու վերաբերման դէպի կրօնը։ Բերեանովը շատ բարձր է դասում Նեմէշովին իրեն մասնագիտ և ցանկանում է որ նրա՝ «Գիտութիւնը մարդու մասին» շարադրութիւնը շատ տարածվի։ Բայց,—նկատում է դաւանութեան Բերեանովը,—մասնակալից մարդկութեան և մասնա-կալի ինտելիգենտի դժուար է ընդունել, ճանաչել Բիւստոսին։ Յետ և պահում հրան աղատութիւնը կորցնելու, իր անձ-նաւորութիւնը ստեղծանելու ինչ-որ մի երկիւղ։ Եւ երկիւղ չէր Բիւստոսի կրօնի առաջ։ Բայց դա՛ խորին մտորութիւն է։ Մ. աւ. -ը. Միլեան

Մ Ա Ս Ո Ւ Լ

Տեղական «Тифл. Листок» թերթում պ. Ի. Պ. Կանան ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան առիթով մի յօդուած է նուիր-ւել, որի մէջ այն միտքն է յայտնում, թէ «Մշակ» և «Գործ» թերթերը միատեսակ արտայայտութիւններով խօսում են Իգմիլ-լեանի առաջիկայ գործունէութեան և պաշ-տօնավարութեան մասին։ Ապա յօդուածա-գիրը ասում է, թէ ներկայումս հայկական կեանքում երեք նկատելի հոսանք (երեք խումբ) անձնաց կա—կերական, մշակա-կան և գործարան։ Այդ խմբերից ամեն միւրը աշխատում է ենթարկել նոր կաթո-ղիկոսին իր ազդեցութեանը և իր շահերին, և որովհետև կաթողիկոսը, քննադատաբար, չէ կարողանալու համոզ լինել ամենքին, ուստի նրան պախարակելու են այն երկու խմ-բերը, որոնց նա չէ հաճոյանալու։ Ռուս թերթը այնքան առաջ է գտնւում, որ նոյնիսկ մարդաբանում է, թէ Իգմիլլեան, հաւանօ-րէն, կերպական հոսանքի կողմն է բռնելու, ուստի նա ենթարկվելու է «Մշակի» և «Գործի» յարձակումներին և թշնամական վերաբերմանը։

Ռուս թերթի այդ կարծիքը և երակա-ցութիւնը, որքան նա վերաբերում է «Մը-շակին», ճիշդ չէ արտայայտված։ «Մը-շակը» Իգմիլլեանի կաթողիկոսի գործու-նէութիւնից բոլորովին այն չէ պահանջում, ինչ պահանջեց «Գործ» թերթը (տես № 71)։ Այդ թերթը սպասում է, որ Իգմիլ-լեանի օրով «Իսկապատ կերպով կը պակ-վին այն գործառնութիւններն ու փորձերը, որոնք սկզբը զգլեց հանդուցեալ ժողո-վրդական յիշատակի օրով արանից մի քա-նի տարի առաջ։

Աստուած չը տայ, կասենք մենք,—և այդ յաճախ կրկնել ենք,—որ Իգմիլլեանի օրով հայոց եկեղեցու մէջ հաստատվի այն կար-գը, որը գոյութիւն ունէր Սրբեանի օրով և որը հասցրեց եկեղեցու ու ազգային-եկե-ղեցական գործերը կատարելու կազմաւոր-ման, բայցայայն, փաշայական սխառնի, երբ օրով, կանոն սահմանվում էր ամեն քաղ, ըստ հաճոյս կերպի կամ թիաֆայականի, որ, օգտվելով ձեռքերի կաթողիկոսի գաղա-մութիւնից և անակաւորութիւնից, իր թիաֆայական նեղ, զմուծ շահին էր առաջ տանում։ Սիմոնականութիւնը, զօրաբաւ-թիւնը, ազգային-եկեղեցական գոյքերի կո-ղոպումն, կեղծումներ—ան Սրբեանի գործունէութիւնների օրով ձեռք բերելու և մոտենալ հայոց եկեղեցու մէջ այն դէպքաւ-տիական ընթացիկները, որոնք բղջրում են հայոց եկեղեցու ժողովրդական ոգուց և ուղ-ղութիւնից։

«Գործի» պահանջը և տեսակէտը զուտ թիաֆայական և պայմանական է, միւր հա-նր չէ և առանց որեւէ անկաւորութիւնների ու շահերի։ Մենք մշակականներն ու ձգտել ենք, ոչ էլ ձգտում ենք մեր ձեռքը ձգել չաղ քաղաքները, գրաւել ազգային ուժիկա-տու բոլոր հաստատութիւնները, ինչպէս ձգտեցին և ձեռք բերին Սրբեանի օրով

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ա Ն Ք Ի Ն

Եգիպտոսից ստացվող լուրերը անհանգստություն են պատճառում Անգլիային: Բոլոր նշաններով երևում է, որ Եգիպտոսը գտնվում է յեղափոխության նախօրեակում: Քիբրեյական անցքերը զբաղել ազդեցություն են գործում եգիպտական նացիոնալիստների ժողովրդի վրա, որոնց յամառ ազդեցության վաղուց արդեն հող է պատրաստել յեղափոխական ընկերության համար:

Եգիպտական նացիոնալիստները համոզված են, որ հարկաւոր բողէին խզելը զուտ կանցնէ երկրի ազգային շարժման: Իսկ եթէ նա չը համարձակվի այդ քայլը առնել և կը շարունակէ անգլիական ստրկի դիրք խաղալ, այն ժամանակ նացիոնալիստները չեն տատանվի նոյնիսկ գահընկէց անել եգիպտական Մահմէդ-Ալի խըզիկների թագաւորող սուլուն: Իսկը կը հասնի արդեօք դրան թէ ոչ, յամենայն դէպ պէտք է սպասել, որ Եգիպտոսը թիրեքի յաղթութիւնը Կ. Պոլսում յեղաշրջում առաջ կը բերէ եգիպտոսում Զգաստօրէն զիտող անգլիայիները, որ Եգիպտոսի տէրն են, իրանց չեն խաբում սպաւորդ անցքերի առթիւով և ձեռք են առնում անհրաժեշտ միջոցներ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆՔԱՐ
Յ. ՏԵՐ-ՄԱՐԿԻՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանկաբարձուհի եւ մասնաւոր

Հ. ՄԱՆՐՈՒՐԵԱՆ-ԴԱԻՐԵԱՆՅԵՐ

Ընդունում է ծնունդներ և բժշկում է բժշկի խորհրդով կանացի հիւանդութիւններ, սրկում է կանանց, տղամարդկանց և երեխաների կաշուի տակ թէ իր և թէ հիւանդների մօտ մատուցել դեղով: Պատասխաններին տալիս դիւրութիւն և խորհուրդներ կանանց հիւանդութիւնների վերաբերմամբ: Ընդունելութիւնը ամեն օր ժամը 12—1—ը, իսկ կիրակի օրը պատասխանում է ծագիկ: Հասցէ՝ Սեփականի թաղ, № 4, Մ. Սիմոնյան:

(Տ. Կ.) 51. 50—31

Լոյս տեսնւում և վաճառվում են

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

գրականութեան հետեւող գրքերը

Նախաճարգը կտաքը, 20 պատկերով, Լուսնիկի թարգմ. Թ. Քաղցրահանի, 25 Կ. Կոնց Ռոբերտսոնի, Լանդի, թարգմանութեան Քաղցրահանի, 80 Կ. Կոնց Ռոբերտսոնի, Լուսնիկի թարգմ. Ս. Մալխասեանի, 50 պատկերով 30 Կ. Կոնց Ռոբերտսոնի, Ս. Քաղցրահանի, 20 Կ. Տապի, Կոնց Ռոբերտսոնի, Թարգմ. Բաղդուհանի, 10 Կ. Բաղդուհանի, Ս. Բ. Մալխասեանի, 50 Կ. Պատկերաւոր պատկեր օրացոյց, Պոլսի տեսլիկները, թիրեքերէն, ֆրանսերէն, յունարէն և հրէից լեզուներով: Տախտուրը զարդարված է Ուրիման, Սաֆի, Սաֆաուր, Բզմիրիկան կաթիլ, պատկերներով և երուսաղէմի Յարութիւն պատր. պատկերով: Դրին է պատկեր ծախքով 75 Կ. Դրինի թիրեքի, «Գուտտենբերգ» գրականութիւնը: 2—2 316.

Ապրիլի 20-ից մինչև յունիսի 15-ը

Յուշին տնում վերանորոգութիւն կատարելու պատճառով, տպագրական, կանանց եւ երեխաների պատրաստի հագուստեղէնի

„ԷԿՍԵԼԱՆՍ“

խանութը փակ կը լինի ամբողջ յուլիս ամսվայ ընթացքում:

Այդ պատճառով մենք օրոշել ենք ապրիլի 20-ից մինչև յունիսի 15-ը նշանակել խանութում գտնված բոլոր ապրանքի համար

ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

Ցանկանալով բոլոր ապրանքը վաճառել մինչև վերանորոգութիւնը գնեք նշանակված են ֆաբրիկային գներից էժան: Գների առասպելական էժանութեան համար պ. պ. գնողներին խնդրում ենք անձամբ ստուգել:

ՎԱՃԱՌՔԸ ԱՌԱՅ ՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

Ապրիլի 20-ից մինչև յունիսի 15-ը

(19, 24, 28, մայ. 2, 5) 328. 5—1



Կարճը 2 ր. 50 Կ. և 3 ր. 50 Կ.: Հասցէ՝ Т-во «Патентъ» Варшава, Св. Креста № 48. Օդէն. 23. Նախագործութիւն. Պ. պ. գնողների ուղարկութիւն ենք դարձնում, որ մօզերիան իսկական ժամացոյցներն են Ա. ՄՕԶԵՐ:

(19, 26, 27, 31) (В. 26254) 329. 3—1

„ВЕСТНИКЪ ЕВРОПЫ“

Ежемесячный журналъ Исторіи, Политики и Литературы, издаваемый М. М. Ковалевскимъ, подъ редакціей К. К. Арсеньева. Вышла апрѣльская книга.

Подписка на 1909 г. продолжается. Адресъ Главной Конторы Редакціи: С. Петербургъ, Вас. Остр. 5 линія, 28.

326. 1—1

Լ յ յ ա տ ե ս ա լ

ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ

Համառոտ

ԵՐՈՒԱՆԻ ՎԱՐԿԱՅԵՏ

Էջ 88, գինն է 30 կօպէկ

Դիմել էջմիածին՝ Երուանդ վարդապետին:

(Կ. չ. ու.) 282. 5—5

ՀԱՅ-ԿԱԹՕԼԻԿ

Երգիովանար մը

կը փնտռուի,

որ կարենայ նաև երգչներու խումբը կազմել:

Պայմաններուն վրա խօսելու համար գիմել հետեւել հասցէին. Карасубазаръ, Таавричъ губ., Армяно-Католическая церковь.

(ա. օ.) 310. 5—5

Կ ո Ր ա ծ Է

Մարտի 10-ից էջմիածինից Թիֆլիս տեղափոխված Համբարձում Բաղդասարեան անունով մի աղայ, 15—16 տարեկան, պարսկական անցադրով: Խնարհաբար խնդրում եմ տեղեկութիւն ունեցողներին յայտնել ինձ կամ Յովսէփ Միլի-Չանեանցին (Սօլախալյա փող. № 10) և կամ Հաւաբար՝ էջմիածին փող. № 41, Տէր-Յարութիւն Շախեանցին:

Հօրեղբոր որդի՝ Գէորգ Բաղդասարեան

(ու. Կ. չ.) 320. 3—2

Պատասխանում եմ, ամառվայ ամիսների ընթացքում,

Չայնագրութեան

Ուսուցիչներ

Ցանկացողները շտապեն դիմել, մինչև մայիսի 15-ը, Յովսէփ Կարոյ (БЕДУТОВСКАЯ ул.) Ռոմանու Մելիքեանին:

(ու. Կ. չ.) 314. 5—2

Մի բարեկիրթ հայուհի

տալիս է երաժշտութեան (գաշնափուր) և ֆրանսերէն լեզուի գասեր, նոյնպէս և սուսերէն լեզուի սկզբնական գասեր: Համաձայն է ուրիշ բաղադրներ գնալու: Կարող է ընկերակցել արտասահման ճանապարհորդողներին՝ իրեն թարգման: Հասցէն տեղեկանալ «Մշակի» խմբագրատանը:

(Տ. Կ.) 313. 3—2

ԹԻՖԼԻՍԻՆԱՆՍԱԳՈՒՄ

Բօրչալուի գուտաւում ծախում եմ անսաւային կարւած, 1830 զետեւտին, որը ներկայանում է անսաւա-տղիւ-նաբերողների համար խոնար պահանգ. մեծ կաղնի ծառեր, նախաբերի, հացեցի, քղկեցի, սաւնեցի կայն կայն: Նոյն գուտաւում, նոյնպէս և Գուշէթի և Գօրու գուտաւներում ծախում եմ միանգամայն էժան, ամենի համար խոնար նախաւորիւն ունեցող մի քանի կալուածներ, որոնք պատկանում են մի կալուածատիրոջ: Հետաքրքրվող անձերը թող ուղարկեն դիմելն մանրամասն տեղեկութիւնների համար՝ Ս. Պետերբուրգ, Невскій, 140, А. Г. Муръ.

(П. 60286) 306. 10—4

«Մշակի» յայտարարութիւններից օգտվողներին առաջարկվում է պատուէրներ տուած ժամանակ յիշատակել լրագրի անունը և համարը:

Լ. Լ. Ե. Ա. Լ. Ե. Ֆ. Ի. լարատարաւորից Օրլան քաղաքում (Ֆրանսիա).

2ՍԴԱՆԵԼՈՒ

Գէմ բուրբից բնգունված միջոց բժշկի Դէշանի Ի Օ Դ Ի Ր Ի Ն Ը (Iodhyrine du d-r Deschamp)

Առաջարկվում է բժշկների կողմից իրեն փայտն հետեւները ունեցող: Բժ. Դէշանի Իօդիւրինը ամենապայման միջոց է ներկայանում շաղանալու դէմ. արագ և ազդու գործողութիւնը նկատվում է բժշկութեան հէնց նրա սկզբում: Բժ. Դէշանի Իօդիւրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար: Գիրանալը հետաքննում է աստիճանաբար ամենակարճ ժամանակամիջոցում: Մի արկի գինը, որ իր մէջ պարունակում է 60 գեղանալի, արժէ 4 ր. 25 Կ.: Վաճառվում է բոլոր դեղատներում և դեղագործ խանութներում: Ռուսաստանում գրեաւոր ներկայացուցչութեան հասցէն՝ Торговый Домъ Люксембургъ и К-о, Варшава, Журавля, № 40.

(19, 29, մայ. 9, 19, 29) 233. 5—4

1897 թ.

„ՊՐՕՎՈԴՆԻԿ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1908 թ.

Անդրկովկասեան ֆարրիկային պանետր

Թիֆլիս, Սօլախալյա փող., № 4.

Առաջարկում է շինուշիւնների կառուցման սեզօնին

„ՊՐՕՎՈԴՆԻԿ-ԼԻՆՈԼԵՆՈՒՄ“

ԱՄԵՆԱԼԱԻ ԾԱԾԿՈՅԸ ՅԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

— ԼԻՆՈԼԵՆՈՒՄԸ ՓՈՒՍԹԻՆՈՒՄ է պարկեային, յատակները ներկելուն, մօզալիկներին, գորգերին, գործկաներին, կլէնկաներին և այլն:

— ԼԻՆՈԼԵՆՈՒՄԸ ԱՌԱՆԵԼԱԳՈՅԸ է յատակը ծածկելու ուրիշ միջոցներից նրանով, որ պահպանում է յատակը խոնաւութիւնից և ցրտից, անթափանցիկ է, փոշի չէ առաջացնում, թթուաններից չէ փշանում, ոտների ձայնը խլացնում է, շուտ է մաքրվում և ընդմիշտ գեղեցիկ է մնում:

— ԼԻՆՈԼԵՆՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ԷԺԱՆ ՏԵՐԿՈՅԸ ամբողջեան, յարմարութեան գեղեցկութեան կողմից միանգամայն առաջին տեղն է բռնում մինչև օրս գոյութիւն ունեցող ծածկոյցների շարքում, որի համար վկայում են «Պրօվօդնիկ» Ընկերութեան ստացած պարգևները և գովառանական թղթերը, ինչպէս ուսուց, այնպէս և արտասահմանեան ցուցահանդէսներում:

— ԼԻՆՈԼԵՆՈՒՄԻ Նախահաշիւր և նկարները ուղարկվում են ըստ առաջին պահանջման:

(Տ. Կ.) 284. 8—5

1897 թ.

„ՊՐՕՎՈԴՆԻԿ“

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1888

Ի Դ Դ Ս Յ Ո Ւ Մ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՓԱՐՐԻԿԱՅԻՆ ՊԱՅԵՍԸ

Սօլախալյա փող., № 4.

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ

ԲԷԶԻՆԱՊԱՏ ԱՆԹԱՓԱՆՅԻԿ ՎԵՐԱԶԳԵՍՏՆԵՐ

Արտասահմանեան նոր ձևի, պատրաստված անգլիական ամենալաւ կտորներից սկսած մինչև ամենաէժան կտորները:

ԲԷԶԻՆԱՊԱՏ ՊԼԱՇՉԵՐ ՈՒ ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ պարոնայք օֆիցերների համար:

ԲԷԶԻՆԱՊԱՏ ԿՏՈՐԵԼՆԵՐ զանազան կարիքների համար:

ԲԷԶԻՆԱՊԱՏ ՍՊՈՐՏԻՆԳՆԵՐ

ՍԱՆՐԵՐ եղջերայ ըզկնից

Հատաւ փաճառուշիւն աշխարհի աւելեւալաւ

ԿՐԿԱԿՈՇԻԿՆԵՐԻ „ՊՐՕՎՈԴՆԻԿ“

(№ 4)

25—14